# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

<<ԿՄՀՔ-ԳՀԾՁԲ-19/01>> ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու որոշման արձանագրություն

30 .07.2019թ.

ք.Հրազդան

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

---

/Վ.ՍԱՖԱՐՅԱՆ/

Ընդունել ի գիտություն՝

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

1.2 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցում էր ուղարկվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերի պահանջի վերաբերյալ: Սահմանված ժամկետում և սահմանված կարգով մասնակցի կողմից ներկայացվել էր որակավորման չափանիշները հաստատող փաստաթղթերը:

2. Ընթացակարգի հայտերը գնահատելու և պայմանագիր կնքելու որոշման մասին

---

2. Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.1 կետը, հանձնաժողովը որոշեց հաստատել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնահատման արդյունքները, ինչպես նաև << ԿՄՀՔ-ԳՀԾՁԲ-19/01> ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել <<ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա>> ՓԲԸ -ին՝ վերջինիս առաջարկելով <<Հրազդանի համայնքապետարանում և ենթակա համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում աուդիտորական ծառայությունների մատուցման>> պայմանագիր կնքելու առաջարկ:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ---------------- Վ. Սաֆարյան

Անդամներ՝

---------------- Ռ. Դանիելյան

---------------- Ա. Եփրեմյան

---------------- Ա. Բաբայան

---------------- Զ. Վարդանյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ ---------------- Բ. Բաղդասարյան